ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

07-ը ապրիլի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Ապրիլի 7-ի՝
Մայրության և գեղեցկության տոնի առթիվ

Թանկագի՛ն մայրեր, սիրելի՛ տիկնայք.
Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Ապրիլի 7-ի՝ Մայրության և գեղեցկության տոնի առթիվ: Կնոջ մեծագույն առաքելությունը մայրությունն է, որը մեզ՝ հայերիս համար վեհ ու նվիրական խորհուրդ ունի: Հայ առաքելական եկեղեցին այսօր նշում է նաև Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը, որը լավագույն առիթն է սրտանց ու մեծ խոնարհումով շնորհակալ լինելու մեր մայրերին անսահման հոգատարության, սիրո և նվիրումի համար:
Խորին հարգանքով ու երախտիքով առաջին հերթին շնորհավորում եմ հայրենիքի պաշտպանության համար նահատակված հերոսների մայրերին, ովքեր խիզախ, հայրենասեր ու անձնվեր զավակներ են դաստիարակել:
Մենք պետք է անենք առավելագույնը նրանց անփարատելի կորստին և անսահման կարոտին արժանի ամուր, ուժեղ ու ամբողջական հայրենիք ստեղծելու համար:
Սիրելի՛ մայրեր.
Գնահատելի է ձեր անփոխարինելի դերը լիարժեք ու օրինակելի ընտանիքների, բարեկիրթ ու հանդուրժող հասարակության կայացման գործում: Ազգային-եկեղեցական տոնացույցի այս ջերմ ու գեղեցիկ օրվա առթիվ կրկին շնորհավորելով՝ մաղթում եմ լինեք առողջ ու անսահման երջանիկ, շրջապատված ընտանեկան սիրով ու ջերմությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ